ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 հոկտեմբերի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

141
(2991)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ. ՎԵՐՔԻՆ ՍԿԱՆԴԱԼԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի սկսած խարդավանքները հասել են իրավապահ կառույցների ղեկավարներին: Նա փորձում է խորամանկ մեթոդներով հասնել ուժային շատ կառույցների ղեկավարների պաշտոնանկությանը: Ընդ որում, ՔՊ-ական պատգամավորն իր այս ծրագիրն իրականացնում է քողարկված կերպով, այսպես ասած՝ այլոց ձեռամբ: Անդրանիկ Քոչարյանը, նախ, Արփի Դավոյանի «դեմքով» պաշտոնանկ արեց արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանին՝նրա դեմ ստորագրահավաք նախաձեռնելով: Երեկ՝ երեկոյան՝ սկանդալից հետո, Արփի Դավոյանը կրկին ձեռնամուխ եղավ ՔՊ վարչության նիստում Նիկոլ Փաշինյանի ներկայությամբ Արգիշտի Քյարամյանի վարքը քննարկելուն եւ պաշտոնանկության հարցը բարձրացնելուն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Անդրանիկ Քոչարյանը հեռուն գնացող մտքեր ունի. նա ցանկանում է իրավապահ կառույցները մաքրել իրեն չենթարկվող կերպարներից, միեւնույն ժամանակ՝Նիկոլ Փաշինյանին միջնորդավորված համոզելով, որ իր մերձավոր ՔՊ-ականներին նշանակի այդ պաշտոնին: «Ժողովուրդ» օրաթերթի հավաստի տեղեկություններով՝ Գրիգոր Մինասյանի ճակատագրին է արժանանալու նաեւ քննչական կոմիտեի ղեկավար Արգիշտի Քյարամյանը, որի բացահայտումները ՔՊ-ականների ապօրինությունների մասին երեկ իրարանցում էին առաջացրել ԱԺ-ում: Անդրանիկ Քոչարյանը համարում է, թե Արգիշտի Քյարամյանը տապալել է ՀՀ-ում հանցավորության իրավիճակի մասին նախաձեռնած իր լսումները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Մինասյանից եւ Քյարամյանից հետո ՔՊ պատգամավորների թիրախում է հայտնվելու ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը: Նրա դեմ աշխատում է Արսեն Թորոսյանը, ում մասով կա հարուցված քրգործ, սակայն պատգամավորը մինչ օրս մեղադրյալ չէ:

Թորոսյանը, օգտվելով իրավիճակից, բարձրացրել է գլխավոր դատախազի դեմ ստորագրահավաք կազմակերպելու անհրաժեշտության հարցը:

ՀՀ Ազգային ժողովում երեկ Անդրանիկ Քոչարյանը ուժի ցուցադրություն էր կազմակերպել. երկրի բոլոր ուժային կառույցները առաջին դեմքերով, Նիկոլ Փաշինյանի հրահանգով, հավաքվել եւ քննարկում էին Հայաստանում հանցավորության վիճակը, սակայն, ակնհայտորեն, ՔՊ-ական պատգամավորները պասիվ էին: Միայն Անդրանիկ Քոչարյանի մտերիմ պատգամավորներն էին ներկա այդ կարեւոր քննարկմանը, մի քանիսը՝ԱԺ պաշտպանության հանձնաժողովից եւ, իհարկե, Հովիկ Աղազարյանը, որը առաջիկայում անխուսափելիորեն պետք է հայտնվի մեղադրյալի աթոռին: Հարցը, ինչ խոսք, իսկապես հրատապ է, բայց պակաս կարեւոր չէ, թե ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ինչ որոշում կկայացնի ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանի մասով: Հիշեցնենք՝«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝Աղազարյանին կաշառք փոխանցելու պայմանավորվածության մասով ՀՀ քաղաքացի Աշոտի նկատմամբ քրեական վարույթ է նախաձեռնվել, բայց ենթադրյալ կաշառք վերցնող պատգամավոր Աղազարյանն անպատիժ է: Տարբեր ամբիոններից արդարության, արդարադատության եւ պրոֆեսիոնալիզմի մասին ելույթներ ունեցող Աննա Վարդապետյանը հապաղում է իշխող խմբակցության պատգամավորին մեղադրյալի աթոռին նստեցնելուց՝մինչդեռ իրավաբանական նվազագույն գիտելիքներ ունեցող յուրաքանչյուր ոք պնդում է, որ Աղազարյանը ախուսափելիորեն պետք է մեղադրյալ դառնա: Երեկ «Ժողովուրդ» օրաթերթը հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար Սասուն Խաչատրյանից հետաքրքրվեց, թե ինչ կաշկանդվածություն ունի, ինչու Աղազարյանին մեղադրանք առաջադրելու համար չի դիմում գլխավոր դատախազին: Խաչատրյանը խուսափեց հարցի ուղիղ պատասխանից թե՝դուք շատ տեղեկացված չեք գործից: Իսկ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը «Ժողովուրդ» օրաթերթի հարցին, թե ինչու եք հովանավորում ՔՊ պատգամավորին, ասաց, թե հարցազրույց չի տալիս: Մինչդեռ մենք մանրամասները ներկայացրել էինք երեկվա համարում:



Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

Տարեսկզբին լուրեր տարածվեցին, որ Սյունիքի մարզի Մեղրի համայնքում չկա մաքսակետ, ոստիկանության բաժին, դիահերձարան, դատարան, կադաստրի կոմիտեի գրասենյակ: Պետական համակարգի աշխատակիցները շտապեցին հերքել այդ լուրերը: Ամիսներ հետո «ճարահատյալ» սկսեցին կառավարության կողմից միլիոնավոր դրամների հատկացումները դիահերձարանի եւ մաքսատան կառուցման համար: «Ժողովուրդ» օրաթերթը պետական գնումների կայքից տեղեկացավ, որ այս տարի Մեղրու դիահերձարանի շենքի կառուցման նախագծանախահաշվարկային փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերման համար առողջապահության նախարարությունը հատկացրել է 22 մլն 500 հազար դրամ: Մեղրու տարածաշրջանում շուրջ 2 տարի է դիահերձարան չի գործում, ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկության՝հրդեհ է բռնկվել եւ դրանից հետո այլեւս չի վերանորոգվել: Բնակիչները ստիպված դիակը տեղափոխում են Կապան՝դիահերձում իրականացնելու համար, իսկ եթե նկատի ունենանք, որ ճմեռը Մեղրի-Կապան ճանապարհը կարող է անանցանելի լինել, հասկանալի է, թե ինչ դժվար կացության մեջ են հայտնվում բնակիչները, որոնք կորցրել են իրենց ընտանիքի անդամին, բարեկամին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Նիկոլ Փաշինյանն իր հայտարարություններով բազմաթիվ անգամներ է արտահայտել իր «խոր անհամաձայնությունը» ՀՀ սահմանադրության վերաբերյալ: Մասնավորապես, ՀՀ Անկախության հռչակագրի ընդունման 34-րդ տարեդարձի առթիվ իր ուղերձում Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, թե Անկախության հռչակագրի եւ ՀՀ սահմանադրության բովանդակությունները նույնական չեն, եւ Մայր օրենքի մեջ արտահայտված են Անկախության հռչակագրի միայն այն դրույթները, որոնք արտահայտված են ուղղակի, բառացի եւ տառացի, եւ որեւէ այլ մեկնաբանություն պարզապես պատեհ չէ: Այսպիսով՝թերեւս Հայաստանի վարչապետը ակնարկեց ՀՀ Անկախության հռչակագրի խմբագրման կամ փոփոխության իր մտադրության մասին: Նախ, ընդգծենք, որ ՀՀ սահմանադրության 203-րդ հոդվածի համաձայն՝ սահմանադրության նախաբանը՝Անկախության հռչակագիրը, փոփոխման ենթակա չէ: ՀՀ գերագույն խորհրդի նախկին պատգամավոր Արամ Մանուկյանը, որը առաջինն էր ՀՀ անկախության լուրը հայ ժողովրդին հայտնել, ArmLur.am-ի հետ զրույցում ասաց. «Որեւէ մեկի խելքին եթե պտտվի, ամբողջ ԱԺ-ով փորձեն Անկախության հռչակագրում անգամ մեկ ստորակետ փոխել՝չեն կարող, որովհետեւ Անկախության հռչակագրի կարգավիճակը լրիվ այլ է. այն վերիրավական փաստաթուղթ է, այն պետության հիմնադիր փաստաթուղթ է, պետության հիմքերի մասին է: Անգամ եթե պետություններ ոչնչանան, ապա Հռչակագիրը կարող է հիմք ծառայել հետագայում նոր պետության ստեղծման համար»: Հավանաբար հենց այս պատճառով էլ, հայրենի իշխանությունները լծվել են ոչ թե ՀՀ Մայր օրենքում փոփոխություններ կատարելու գործին, այլ այն ամբողջությամբ փոխելուն:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

ԹԱՆԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ

Հայտնի է, որ նոյեմբերի 1-ից Երեւան քաղաքում անցում է կատարվելու միասնական տրանսպորտային համակարգի, եւ վճարումներն արվելու են անկանխիկ՝ QR կոդերի միջոցով:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Երեւանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար Իզաբելլա Աբգարյանը խոսել է տրանսպորտի թանկացումների մասին:

-Տիկին Աբգարյան, գիտենք, որ արդեն հունվարից տրանսպորտի թանկացման նոր նախագիծը ուժի մեջ է մտնելու: Երբ նախագիծը շրջանառվեց, Երեւանի ավագանու ընդդիմադիր խմբակցությունները հայտարարեցին, որ իրենք դուրս են գալու փողոց եւ փողոցային պայքար են սկսելու նախագիծը չեղարկելու համար, այդ թվում՝ նաեւ Հայկ Մարությանը: Նախագծի շրջանառության մեջ մտնելուն հաշված օրեր են մնացել, ի՞նչ եք պատրաստվում անել, արդյոք դուրս գալո՞ւ եք փողոց:

-Նախ եւ առաջ, երբ այդ հայտարարությունն արվեց, թանկացումն ուժի մեջ պիտի մտներ սեպտեմբերի 1-ից: Այո՛, մենք պատրաստ էինք, որ սեպտեմբերի 1-ին լինեինք փողոցում, սակայն պիտի հասկանանք, որ միայն մեզնով չէ: Ամեն բան կախված է երեւանցիներից: Մենք այսօր էլ հայտարարում ենք, որ երեւանցիները, եթե չեն ցանկանում համակերպվել, ապա մենք իրենց կողքին կլինենք՝ փողոցում, թե դահլիճում: Մարդկանց ստիպում են օգտվել նոր համակարգից, սակայն վճարման քաղաքակիրթ միջոցներ դեռեւս չեն ապահովել՝ քարտեր, «էն էֆ Սի» եւ այլն: Մարդկանց չեն ապահովել տարրական վճարման միջոցներով, սակայն ստիպում են անցում կատարել այդ համակարգին: Ինչո՞ւ, հայտնի չէ:

Բացի դրանից, եկեք փաստենք, որ խախտվում է արդարությունը եւ անհավասարություն է առաջանում մետրոյով եւ վերգետնյա տրանսպորտով երթեւեկողների միջեւ: Եթե վերգետնյա տրանսպորտի դեպքում քեզ թույլատրում են ամեն դեպքում դրամով վճարել, ապա մետրոյի դեպքում ինչո՞ւ են ստիպում, որ բոլորը QR կոդով վճարեն: Հենց այստեղ էլ տեսնում ենք՝ չկա մոտեցում, որը ընդունելի կլինի բոլորի դեպքում եւ քաղաքացիները հավասար դիրքերում կգտնվեն:

-Տիկին Աբգարյան, կարծես թե իրազեկումն էլ նորմալ կերպով չի իրականացվել: Ստացվել է այնպես, որ բոլոր այն քաղաքացիները, ովքեր սոցիալական ցանցերում ներկայություն չունեն, ապա տեղյակ չեն, որ պետք է միայն 100 դրամանոց մանրադրամով վճարում կատարեն:

-Եկեք հիշենք, որ դա սկիզբ առավ Հայկ Մարությանի քաղաքապետ լինելու շրջանում: Այդ ընթացքում ամրագրվեց միայն 100 դրամանոց մանրադրամով վճարման համակարգը, որի շնորհիվ ստվերն ամբողջությամբ վերացվել էր: Հենց այս իշխանությունն է, որ, Հայկ Մարությանին հեռացնելուց հետո, վերադարձրեց ստվերը եւ, ենթադրաբար, բոլ-բոլ օգտվեց այդ ամենից, իսկ հիմա նորից հանում են:

Իրազեկվածության խնդիր, այո՛, կա: Ինձ մինչեւ այսօր բազմաթիվ քաղաքացիներ հարցնում են, թե որքան է դառնալու երթեւեկության համար վճարվելիք գումարը հունվարի 1-ից հետո: Մեր քաղաքացիներից շատերը հունվարի 1-ից հետո անակնկալի են գալու:

-Իսկ ինչպիսի՞նն են փաթեթները:

-Փաթեթները քվեարկվել են բազմաթիվ փորձերից հետո, եւ գինը մի փոքր իջել է, ու քարտերը դարձել են անսահմանափակ:

-Նշում եք, որ եթե երեւանցիները դուրս գան փողոց, ապա դուք կմիանաք նրանց: Արդյոք հենց դո՞ւք չեք, որ պիտի համախմբեք նրանց:

-Մենք արդեն նշել ենք, որ պատրաստ ենք պայքարի, բայց, այո՛, այս հարցում շատերը պիտի իրենց խոսքն ասեն, քաղհասարակությունը՝ հատկապես:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 232

ՀՀ-ՈՒՄ ՄՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆԱՃԸ ՀԱՏԵԼ Է 30 %-Ի ՇԵՄԸ

«Ժողովուրդ» օրաթերթն այս տարվա հոկտեմբերի 10-ին գրել էր գնաճի խայտառակ բարձր ցուցանիշի՝ 30 տոկոսից ավելի լինելու մասին՝ հակադրելով այն Նիկոլ Փաշինյանի՝ 2018 թվականին տված խոստումներին: Բայց, իրականում, կան սննդամթերքի տեսակներ, որոնց գնաճը հասել է նույնիսկ 40 տոկոսը:

Մինչ այդ հիշեցնենք, որ ՀՀ (այդ ժամանակվա) նորընտիր վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2019 թվականի սեպտեմբերի 16-ին՝ Վանաձորում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ, հայտարարել էր. «Այսօր ժողովուրդը կառավարության նկատմամբ ունի այնպիսի վստահություն, որ առաջիկա 5 տարին ռիսկեր չեն լինելու, իսկ դա օգնում է, որ գնաճը մնա ցածր մակարդակում: Գնաճի խնդիրը ոչ միայն հիմա է լուծված, այլեւ 5 տարվա կտրվածքով գնաճի խնդիր չկա»: Նիկոլ Փաշինյանի այս խոստումը եւս, ի թիվս այլ բարձրաձայնումների, իրականություն չի դարձել: ՀՀ պետական վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալների քառանիշ դասակարգմամբ ապրանքախմբերի գների կուտակային աճը վերլուծելով՝ 2017 թ. բազային տարի ընդունելով, «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ 2018-2023 թթ. 22 ապրանքախմբերի գծով գնաճը գերազանցել է 30 տոկոսը:

Խոսենք օրինակներով.

բանջարեղենի գինը 2018-ից մինչ 2023 թվականը աճել է 42.1 տոկոսով,

ձկնեղենի եւ ծովամթերքի գները 2018-ից մինչ 2023 թվականը աճել են 34.3 տոկոսով,

հացաբուլկեղենի եւ ձավարեղենի արժեքները նույն ժամանակահատվածում աճել են 32 տոկոսով,

մսինը՝ 31,9 տոկոսով,

կաթնամթերքի, պանրի, ձվի արժեքները՝ 29.4 տոկոսով,

մրգերինը՝ 28.1 տոկոսով,

յուղերի եւ ճարպերի գները՝ 25.3 տոկոսով,

սուրճի, թեյի, կակաոյի արժեքները բարձրացել են 18.1 տոկոսով,

շաքարի, մրգախյուսի, մեղրի, օշարակների, շոկոլադի գները՝ 13.2 տոկոսով:

Սրանք պաշտոնական տվյալներ են, որոնք ի ցույց են դնում, որ Նիկոլ Փաշինյանը նորից խաբել է:

ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԺ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

Ժնեւում Հայաստանի եւ Թուրքիայի ԱԺ նախագահները քննարկել են Հարավային Կովկասում խաղաղության գործընթացն ու «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը: Այդ մասին X-ի իր էջում գրել է ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը:

Միջխորհրդարանական միության 149-րդ վեհաժողովի շրջանակում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի խոսնակ Նուման Քուրթուլմուշի հետ հանդիպումը Սիմոնյանը բովանդակալից է համարում:

«Մենք քննարկեցինք երկկողմ հարցերի լայն շրջանակ, Հարավային Կովկասում խաղաղության գործընթացը եւ ընդհանուր տարածաշրջանը», - գրել է ԱԺ խոսնակը:

Սիմոնյանը Քուրթուլմուշի հետ հանդիպմանը ներկայացրել է նաեւ ՀՀ կառավարության «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը: Նրանք պայմանավորվել են հետագայում շարունակել երկկողմ շփումները:

ԱԺ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Հոկտեմբերի 17-ին՝ ժամը 11:30-ին, ԱԺ նիստերի դահլիճում ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության որոշմամբ կհրավիրվեն խորհրդարանական լսումներ: Այս մասին հայտնում են ԱԺ-ից:

Կքննարկվի խմբակցության ներկայացրած «Հայաստանի Անկախության մասին հռչակագրի անժամանցելի արդիականության մասին» ԱԺ հայտարարության նախագիծը:

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՍԿԱՆԴԱԼԻ ՄԱՍԻՆ

«Ես չունեմ կաշկանդվածություն ՔՊ-ականների մասով»: Այս մասին երեկ՝ հոկտեմբերի 15-ին, ԱԺ-ում «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողի հետ զրույցում կարճ մեկնաբանել է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը՝ անդրադառնալով կոռուպցիոն սկանդալի կենտրոնում հայտնված ՔՊ-ական պատգամավոր Հովիկ Աղազարյանին առնչվող գործին:

Հարցին՝ ինչո՞ւ Աղազարյանին չեն զրկում պատգամավորական անձեռնմխելիությունից, Սասուն Խաչատրյանը անպատասխան թողեց՝ նշելով միայն. «Դուք ասում եք ինչ-որ տեղեկություններ, որոնց մասին դուք չեք կարող տեղեկություն ունենալ»:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանը հայտնվել է կոռուպցիոն սկանդալի կենտրոնում: Խոսքը Հայաստանից, սահմանված ընթացակարգերի խախտմամբ, մանր եղջերավոր անասուններ արտահանելու հարցում թույլ տրված ենթադրյալ հովանավորչության դեպքի մասին է, որն առնչվում է պատգամավորի անվան հետ: Դեպքի վերաբերյալ քրեական վարույթ կա հարուցված: Առաջիկայում պարզ կդառնա, թե ինչ գնահատական կտան իրավապահները Աղազարյանի ենթադրյալ արարքին եւ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող դատախազությունը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԱԴՐԲԵՋԱՆԻ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԵՏ

Իրանի նախագահը Ադրբեջանի փոխվարչապետի հետ հանդիպմանը հայտարարել է, որ ոչ մի պետության ինքնիշխանությունը չպետք է անտեսվի, սակայն զգուշացրել է տարածաշրջանում դրսի կողմից պլացդարմ ստեղծելու սարսափելի հետեւանքների մասին:

Այս մասին հայտնում է Tasnim լրատվական գործակալությունը՝ հավելելով, որ Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը Թեհրանում Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւի հետ հանդիպմանը նշել է, որ տարածաշրջանում օտար պետությունների համար պլացդարմ ստեղծելը չի բխի տարածաշրջանի երկրների շահերից:

«Մենք հավատում ենք, որ համագործակցության միջոցով կարող ենք ապահովել անվտանգություն եւ լուծել մեր խնդիրները: Սա Իրանի Իսլամական Հանրապետության վարչակազմի սկզբունքային քաղաքականությունն է, որը մենք միշտ ընդգծել ենք»,- հավելել է Փեզեշքիանը:

35 ՄԼՐԴ ԵՎՐՈՅԻ ՎԱՐԿ՝ ԿԻԵՎԻՆ

Եվրախորհրդարանի Միջազգային առեւտրի հանձնաժողովը հաստատել է Կիեւին 35 միլիարդ եվրոյի չափով վարկ տրամադրելու մեխանիզմը, ըստ որի՝ դրա մարումը կիրականացվի ռուսական ակտիվներից ստացված եկամուտների միջոցով:

Այս մասին փոխանցում է ՏԱՍՍ-ը՝ հղում անելով Եվրախորհրդարանի մամուլի ծառայությանը:

Ըստ աղբյուրի՝ հանձնաժողովի ղեկավարի տեղակալ Բերտ Լանը հայտարարել է, որ որոշման նախագիծն ընդունվել է ձայների մեծամասնությամբ՝ առանց ուղղումների:

Այժմ փաստաթուղթը պետք է հաստատվի Եվրախորհրդարանի նստաշրջանում, որից հետո այն պետք է հաստատի ԵՄ խորհուրդը:

ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԻ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ

Իսրայելի ամբողջ կենտրոնական հատվածում եւ Թել Ավիվում օդային տագնապի ազդանշաններ են հնչել:

Այս մասին հայտնում է «ՌԻԱ Նովոստի» լրատվական գործակալության թղթակիցը:

Ըստ իսրայելական Tzeva Adom հրթիռային նախազգուշացման համակարգի՝ ահազանգը միացվել է ողջ տարածքում՝ Թել Ավիվի հարավային արվարձաններից մինչեւ Հայֆա տանող հատված:

Իսրայելական բանակը հայտնել է, որ տագնապի ազդանշանը հնչել է «Հըզբոլլահ»-ի հրթիռների պատճառով:

Հ. ԱՂԱՋԱՐՅԱՆԻ՝ ԿԱՇԱՌՔԻ ՍՏԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՎ

«ԳԱԼՈ՞Ւ ԵՔ ԱԺ». ՄԱՆՈՒԿՅԱՆԸ՝ ԴԱՏԱԽԱԶԻՆ

Խորհրդարանական լսումների ժամանակ ԱԺ «Հայաստան» խմբակցության դատգամավոր Գեղամ Մանուկյանը մի քանի հարց ուղղեց ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին:

«Հայաստան» խմբակցության պատգամավորը հարցրել է. «Տիկին Վարդապետյան, խոսեցիք դատավարությունների ողջամիտ ժամկետների մասին: Այսօր արդեն երկու տարի 45 օր է, ինչ կալանքի տակ է Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Միքայել Արզումանյանը: Ամեն անգամ դանդաղ ընթացող դատաքննությանը խափանման միջոցի միջնորդություններին մեղադրողը պատասխանում է, որ վկաների հարցաքննությունը ավարտելուց հետո նոր կարելի է անդրադառնալ խափանման միջոցի փոփոխությանը: Նախաքննության որակին դեռ չեմ անդրադառնում: Մի հատվածով ամբողջությամբ «փլվել» է մեղադրանքը, մյուսն էլ պարզապես զավեշտի է վերածվում, երբ շարքային զինվորը հարցաքննության ժամանակ կարող է գնահատական տալ վերադասի գործողություններին: Դեռ, մոտավորապես, 160 վկա կա, եթե դատաքննությունն այս տեմպերով շարունակվի, ապա 13 տարի էլ պիտի ընթանա, դեռ բարոյական կողմին չեմ անդրադառնում: Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի այն հրամանատարը ամենաճակատագրական ու դժվար պահին համաձայնեց ստանձնել այդ պարտականությունը: Որպես իրավաբանի եւ Գլխավոր դատախազի եմ հարցնում՝ իրավաբանորեն որքանո՞վ է բարոյապես նորմալ Հայաստանի զինված ուժերում ծառայություն անցած, 16 տարեկանից արցախյան ազատամարտի մասնակցություն ունեցած, բարձր պաշտոններ զբաղեցրած, ճակատագրական պահին պատասխանատվություն ստանձնած զինվորականին, իմ համոզմամբ, քաղաքական նպատակով եւ լոկ Նիկոլ Փաշինյանի կամքով երկու տարի 45 օր եւ չգիտեմ դեռեւս որքան պահել անազատության մեջ»:

Հարցին ի պատասխան՝ Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ասել է, որ իրավական համակարգի դիրքորոշումը ներկայացված է մեղադրական եզրակացության մեջ, իսկ պատգամավորի դիրքորոշումը քաղաքական է, որի դեպքում զսպվածություն ունեն համակարգի ներկայացուցիչները:

«Ձեր դիրքորոշումները փաստաբանական կողմի մեկնաբանություններն են, մենք մեղադրանք ենք ներկայացրել դատարանում եւ մեղադրանք ենք պաշտպանում: Ազգային ժողովի ամբիոնը դատարանի դահլիճ չէ, որ ես հիմա, որպես մեղադրող, ներկայացնեմ Արեգասարի դրվագը կամ մյուսները, որոնք ամրագրված են մեղադրական եզրակացության մեջ: Դատավարությունն էլ հրապարակային է, ոչ ոք չի արգելում գնալ, նստել եւ լսել: Ինչ վերաբերում է խափանման միջոցին, ապա քանի դեռ վկաների վրա անօրինական ազդեցություն գործադրելու թեկուզ աննշան վտանգ լինի, դատախազությունը յուրաքանչյուր մեղադրյալի դեպքում դեմ է լինելու խափանման միջոցի փոփոխությանը, քանի որ դա վտանգում է քննությանը: Մենք քաղաքական մեկնաբանություններ չենք մեկնաբանում»:

Ի պատասխան Գլխավոր դատախազի մատնանշմանը, թե դատին կարող են ներկայանալ, Գեղամ Մանուկյանն ասել է, որ Միքայել Արզումանյանի դատական նիստերը ընթանում են դռնփակ:

«Ինչ վերաբերում է քաղաքական գնահատականներին, ապա ես քաղաքական մարդ եմ եւ քաղաքական գնահատականներ եմ տալիս, նաեւ հասկանալով, թե քրեական գործը ինչ քաղաքական տարր է պարունակում: Դուք կարող եք թաքնվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի թիկունքում, բայց ԱԺ ամբիոնից Նիկոլ Փաշինյանի հնչեցրած հայտարարություններից ավելի քան հստակ է դառնում, որ գործ ունենք քաղաքական հետապնդման հետ եւ այս ամբողջ իրավաբանությունը մեկ կողմում է եւ գերակա է քաղաքականությունը»:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԹԱԹՈՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԼՈՆԴՈՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

Լոնդոնում Արման Թաթոյանը հանդիպել է հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկել է՝

- Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ գերիների ու պատանդների ազատ արձակման եւ Հայրենիք վերադարձի պարտադիրությունը:

- Արցախից (Լեռնային Ղարաբաղից) բռնի տեղահանված մեր հայրենակիցների արժանապատիվ, անվտանգ ու ապահով վերադարձը:

- 2020 թվականից ի վեր Հայաստանի Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի մարզերի տարածքների ադրբեջանական օկուպացիայի եւ մարդկանց համար աղետալի շարունակվող խախտումները՝ ներկայացնելով մարդկանց նկատմամբ ադրբեջանական ամենօրյա հանցանքների ապացույցներ:

Լոնդոն այցը կազմակերպվել է Մեծ Բրիտանիայի Հայ դատի հանձնախմբի հետ համագործակցությամբ:

Հանդիպմանը ներկա գտնվել նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, ինչպես նաեւ առցանց մասնակցել են Արցախի մարդու իրավունքների պաշտոնաթող պաշտպան Արտակ Բեգլարյանը, ինչպես նաեւ միջազգային ատյաններում գերիների շահերի ներկայացուցիչ Սիրանուշ Սահակյանը:

ԻՆՉ ՈՐՈՇՎԵՑ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻՆ

Երեւանի ավագանին երեկ հերթական նիստն է գումարել, օրակարգում ընդգրկված է եղել 20 հարց, որոնցից միայն 5-ն էր զեկուցվող:

Օրակարգի հարցերից 3-ը վերաբերում էին 8 բնակելի շենքերի շենքերի կառուցմանը համաձայնություն տալուն, մեկ բենզալցակայանի եւ մեկ արտադրական նշանակության շինության կառուցմանը համաձայնություն տալուն:

Օրակարգի հարցերից 4-ը վերաբերում էին Գուրգեն Մուշեղյանի, Դավիթ Սեդրակյանի, Արտաշես Հովսեփյանի եւ Սուրեն Օսիպյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակներ տեղադրելուն:

Օրակարգային մեկ այլ հարց վերաբերում էր Երեւան համայնքի սեփականություն համարվող թվով 85 էլեկտրաշչակները (ընդհանուր 11,927,917.20 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով) Տավուշի մարզի Իջեւան, Դիլիջան, Նոյեմբերյան եւ Բերդ խոշորացված համայնքներին նվիրաբերելուն՝ բնակչության ազդարարման համակարգը բարելավելու նպատակով:

Ավագանու որոշմամբ՝ նաեւ Երեւանի 2806-ամյակի առթիվ բեմադրիչ, Հայաստանի ժողովրդական արտիստ Արմեն Խանդիկյանին, օպերային երգիչ Բարսեղ Թումանյանին, քանդակագործ, նկարիչ Լեւոն Թոքմաջյանին եւ բանաստեղծ, դոկտոր-պրոֆեսոր Հենրիկ Էդոյանին շնորհվել է «Երեւանի պատվավոր քաղաքացու» կոչում:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՔՐԳՈՐԾ

«ՀՈՂԱՏՈՒ», «ԴԱՎԱՃԱՆ» ԳՈՉԱԾ ՊԱՊԻԿԸ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ ֆինչական կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարել Նիկոլ Փաշինյանի կնոջ՝ Աննա Հակոբյանի հետ Ծիծեռնակաբերդի միջադեպի գործով:

Տեղեկությունը «Ժողովուրդ» օրաթերթին հաստատել էր փաստաբան Արայիկ Պապիկյանը՝ հայտնելով, որ նախաքննության ավարտ է հայտարարվել, ու գործն ուղարկվել է դատախազին՝այն հաստատելու եւ դատարան ուղարկելու համար: Գործը դատարանում է եւ երեկ Կենտրոնի նստավայրում առաջին դատական նիստն էր:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ միակ մեղադրյալը ԱԺԲ անդամ 67-ամյա Տիգրան Դերմոյանն է: Նա շարունակում է մնալ միակ մեղադրյալը, ու գործը գնում է դատարան. տեսնենք, թե ինչ կլինի դատարանում:

Հիշեցնենք, որ 2024թ. ապրիլի 24-ին՝ «Ծիծեռնակաբերդի» հուշահամալիրի անմար կրակին մոտենալու ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանի կնոջ՝Աննա Հակոբյանի եւ նրա դստեր ներկայությամբ «Ազգային ժողովրդավարական բեւեռի» անդամները բղավել էին՝ «դավաճան», «հողատու»: Միջադեպից հետո 7 անձ ձերբակալվել էր:

Արդյունքում՝ մի խումբ անձանց կողմից առերեւույթ ատելության, խտրականության, անհանդուրժողականության կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսք հնչեցնելու եւ հաղորդակցային-տեղեկատվական մի քանի միջոցներով տարածելու գործողությունների դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության՝Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից, նախնական համաձայնությամբ ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաեւ այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելը) նախաձեռնվել է քրեական վարույթ:

«Ժողովուրդ» օրաթերթը դատական նիստից հետո զրուցել է 67-ամյա ԱԺԲ անդամ Տիգրան Դերմոյանի հետ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՈՐԴՈՒՆ ԳՐԱՎԻ ԴԻՄԱՑ ԱԶԱՏ ԵՆ ԱՐՁԱԿԵԼ

Փաստաբան Տիգրան Գրիգորյանը ֆեյսբուքյան իր էջում արված գրառմամբ տեղեկացրել է, որ Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վարդգես Ստեփանյանը, ուշ գիշերին քննելով քննիչի միջնորդությունն իր պաշտպանյալ Խաչատուր Գրիգորյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, մերժել է այն՝ կիրառելով համակցված խափանման միջոց՝ գրավ եւ տնային կալանք:

«Առավոտյան ժամը 05:00-ից մինչեւ ժամը 3:00-ը տեւած անդադար աշխատանքս տվեց իր նախնական արդյունքը:

Նշեմ, որ առաջադրված մեղադրանքը շինծու է եւ անհիմն, եւ ես ջանք չեմ խնայելու Խաչատուր Բալասանյանի իրավունքների պաշտպանության հարցում» - գրել է Տիգրան Գրիգորյանը:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ հոկտեմբերի 11-ին՝ ժամը 05:00-ի սահմաններում, օդանավակայանում ձերբակալել են Գյումրու նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանի կրտսեր որդուն՝ Խաչատուր Բալասանյանին, ու տարել են հակակոռուպցիոն կոմիտե:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նախկին քաղաքապետի որդին անակնկալի է եկել ստեղծված իրավիճակից ու դեռ ավելին՝ երկրից գնում էր, որ հասներ արտերկրում բուժվող հորը, սակայն իրավապահները կանխել են հոր ու որդու հանդիպումը:

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝հոկտեմբերի 11-ից 14-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 197 դեպք:

Մասնավորապես՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու՝ 44, թմրանյութի հայտնաբերման՝30, մարմնական վնասվածք պատճառելու՝ 24, ֆիզիկական ներգործության՝ 16, անձնական ունեցվածքի գողության՝ 10, խարդախության՝9, խուլիգանության՝7, ինքնավնասման՝ 5, հոգեկան ներգործության, զենք-զինամթերքի առգրավման եւ սառը զենքի հայտնաբերման՝4-ական, կաշառակերության ու թմրամիջոցների մաքսանենգության՝ 3-ական, շորթման դեպք:

Հայտնաբերվել է 12 հետախուզվող, կամավոր ներկայացել՝2-ը:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 3 դեպք:

Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 38 պատահար. 57 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է ԻԻՀ ՔԱՂԱՔԱՑԻ

ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՀՈՐ ԱՌԵՎԱՆԳՄԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՎ

ՀՀ ֆինչական կոմիտեն ավելի վաղ տեղեկացրել էր, որ ԱԺ նախկին պատգամավոր Խ. Քոքոբելյանի հոր՝ Տավուշի մարզի Աչաջուր գյուղի 84-ամյա բնակչի առեւանգման եւ ԱԺ նախկին պատգամավորի նկատմամբ առանձնապես խոշոր չափերի շորթում կատարելու վերաբերյալ քրեական վարույթից անջատված մասը 17.07.2023թ., 4 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Իսկ մայր քրեական վարույթով նախաքննությունը շարունակվել է, որի շրջանակներում բացահայտվել է ենթադրյալ հանցավոր խմբի եւս մեկ անդամի ինքնությունը, ով ԻԻՀ քաղաքացի է:

Իրականացված գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ, ԻԻՀ նշված քաղաքացին Ս. Մանուկյանի եւ մի խումբ այլ անձանց հետ նախնական համաձայնություն է ձեռք բերել 84-ամյա տղամարդուն առեւանգելու եւ շորթմամբ վերջինիս հարազատներից առանձնապես խոշոր չափերի՝3.000.000 ԱՄՆ դոլար պահանջելու շուրջ: Գտնվելով Իրանում՝ իրենց գործողությունները հնարավորինս քողարկված իրականացնելու նպատակով, վերը նշված գումարը կրիպտոարժույթի տեսքով ստանալու համար թվային արժույթի դրամապանակ բացելու հարցով ԻԻՀ քաղաքացին դիմել է ԻԻՀ-ում բնակվող իր մտերիմին՝ պատճառաբանելով, որ անձամբ չի կարող դա անել:

Բիթքոինի կրիպտոարժույթի հաշիվ-դրամապանակի տվյալները տրամադրելուց հետո՝ վերջինս, ԻԻՀ քաղաքացու խնդրանքով ձեռք է բերել նաեւ օտաերկրյա՝ ուկրաինական վիրտուալ հեռախոսահամար, որով բացել է «WhatsApp» բջջային հավելված: Նշված գործողությունները իրականացվելուց հետո Ս. Մանուկյանը, գտնվելով Հայաստանի Հանրապետությունում, հանցավոր խմբի անդամների հետ 2022թ. հուլիսի 27-ին՝վաղ առավոտյան, «Օպել» մակնիշի ավտոմեքենայով գնացել են Տավուշի մարզի Իջեւան համայնքի Աչաջուր բնակավայրի 1-ին փողոցում գտնվող տան մոտ, որտեղ դիմակավորված դարանակալել եւ սպասել են նշված տան 84-ամյա բնակչին: Ժամը 07:00-ին վերջինիս, իր կամքին հակառակ, նստեցրել են նշված ավտոմեքենան, փակել աչքերն ու բերանը եւ դուրս բերել գյուղից: Կարճ ժամանակ անց տարեց տղամարդուն տեղափոխել են «TOYOTA LAND CRUISER PRADO 2.7» մակնիշի ավտոմեքենա, տարել Լոռու մարզի Ծաթեր գյուղ եւ պահել նույն գյուղի բնակիչներից մեկից վարձակալած հյուրատանը, որտեղ Թ. Պողոսյանը եւ հանցավոր խմբի մեկ այլ անդամ հերթափոխով, դիմակավորված, մինչեւ 2022թ. օգոստոսի 2-ը մշտապես գտնվելով նշված տանը՝հսկել են տարեց տղամարդուն:

Այնուհետեւ Ս. Մանուկյանը մեկնել է Իրան եւ հանդիպել ԻԻՀ հիշյալ քաղաքացուն:

Շարունակելով իրականացնել իրենց հանցավոր մտադրությունը՝խմբի անդամները 2022թ. հուլիսի 29-ին՝ժամը 09:30-ին, տարեց տղամարդու որդուն՝ Խ. Քոքոբելյանին, վերոնշյալ հեռախոսահամարի «WhatsApp» հավելվածի միջոցով հաղորդագրություն են ուղարկել՝պահանջելով 3 միլիոն դոլար գումար: Բացի այդ, նրանք բազմիցս վերջնագրեր են ներկայացրել ԱԺ նախկին պատգամավորին՝ սպառնալով, որ հաջորդը կլինի վերջինիս որդին:

«WhatsApp» հավելվածի միջոցով իրականացված բանակցությունների արդյունքում համաձայնության են եկել 200.000 ԱՄՆ դոլարի դիմաց ազատ արձակել տարեց տղամարդուն: Նշված գումարից 20.000 ԱՄՆ դոլարն իրենց կողմից նախապես ուղարկված կրիպտոարժույթի հաշվին ստանալուց հետո, 2022թ. օգոստոսի 2-ին Ս. Մանուկյանը Իրանից վերադարձել է Հայաստան եւ Ա. Ք.-ի հետ, իրենց մտերիմից վերցնելով HYUNDAI SONATA 2.4 մակնիշի ավտոմեքենան, ժամը 11:00-ի սահմաններում, Երեւան քաղաքից ուղեւորվել եւ ժամը 14:00-ի սահմաններում ժամանել են Ծաթեր բնակավայր: Մինչեւ վերջիններիս տեղ հասնելը, Թ. Պ.-ն բամբակե եւ բինտե խծուծներով փակել է տարեց տղամարդու աչքերը, որից հետո վերջինիս տեղափոխել են հիշյալ ավտոմեքենան եւ հեռացել: Նույն օրը՝ ժամը 17:30-ի սահմաններում, Դիլիջան-Իջեւան ավտոճանապարհի անտառապատ գոտում հանցավոր խմբի անդամները տղամարդուն իջեցրել են ավտոմեքենայից, նստեցրել քարի վրա եւ հեռացել Իջեւան քաղաքի ուղղությամբ, որից հետո վերջինիս հարազատներին հաղորդագրությամբ հայտնել են նրա գտնվելու վայրը եւ պահանջել պայմանավորված գումարի մյուս մասը: Ժամը 18:00-ի սահմաններում 84-ամյա տղամարդը հայտնաբերվել է նշված վայրում: Շարունակելով կատարել ձեռք բերված պայմանավորվածությունը՝ վերջինիս հարազատները վերը նշված եղանակով եւս 20.000 ԱՄՆ դոլար գումարին համարժեք փոխանցում են կատարել հիշյալ կրիպտոարժույթի հաշվին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հոկտեմբերի 15-ից 16-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 91 դեպք, որից 5-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԵԾԱՆՎԱԾՈՒՆ ԾԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ԿԳՄՍ նախարարությունը Տավուշի մարզի հիմնական,միջնակարգ, ավագ դպրոցներին եւ վարժարաններին, ընդհանուր թվով՝82 ուսումնական հաստատություններին տրամադրել է 270 հեծանիվ: Այդ նախաձեռնության նպատակը հանրակրթության համակարգում հեծանվային սպորտի եւ առողջ ապրելակերպի մասսայականացումը, դպրոցականների շրջանում ֆիզկուլտուրայի եւ սպորտի քարոզչությունն է: Տավուշի մարզի հանրակրթական բազմաթիվ դպրոցների շենքեր, դպրոցների մարզադահլիճներ վատթար վիճակում են, դրանք հրատապ վերանորոգման կարիք ունեն, փոխանակ դրանք հրատապ նորոգեն՝ հեծանվային շղուներ են անում: 2018 թվականից հետո, երբ Նիկոլ Փաշինյանը պարբերաբար հեծանավային վազքեր չէր կատարում, ինչո՞ւ այն ժամանակ ԿԳՄՍ նսխարարությունը հանրակրթական դպրոցներին հեծանիվներ չէր նվիրում:

ԿԱՄԱՎՈՐԸ ՀԱՆԿԱՐԾԱՄԱՀ ԷՐ ԵՂԵԼ

Հոկտեմբերի 12-ին Իջեւան համայնքի Ներքին Ծաղկավան գյուղում տեղի է ունեցել 43 տարեկան Վարդեւան Ղազարյանի հուղարկավորությունը: Նա 3 տղաների հայր էր, նրա առաջնեկ տղան առաջին դասարան հաճախել է Ներքին Ծաղկավանի միջնակարգ դպրոցում, հետո ընտանիքը տեղափոխվել է Ռուսաստան՝ Դոնի Ռոստով: Ներքին Ծաղկավանում են բնակվում Վարդեւանի ծնողները: Ամիսներ առաջ Վարդեւանը վերադարձել է հայրենի գյուղ: Համագյուղացիների վկայությամբ՝ նա սրտի հետ կապված առողջական խնդիրներ, տեղաշարժման դժվարություններ ուներ, սրտի հետազոտության էր ենթարկվել Երեւանում: Հետո Վարդեւան Ղազարյանը անդամագրվել է ռուսական զինված ուժերի կազմ՝ Ուկրաինայում ընթացող պատերազմական գործողություններին մասնակցելու համար, սակայն ռազմական հավաքի ժամանակ հանկարծամահ էր եղել:

ԱՌԱՆՑ ՎԱՌԵԼԱՓԱՅՏԻ ԵՆ ՄՆԱՑԵԼ

Տավուշի մարզում աշնանային անձրեւների սեզոնն է, անտառային ճանապարհները ցեխով պատվել, բեռնատար ավտոմեքենաների համար անանցանելի են դարձել: Մարզի բազում ընտանիքներ մնացել են առանց ձմռան վառելափայտի: Տավուշի մարզի գյուղերում ձմռանն առանձնատները ջեռուցում են վառելափայտով, տների մեծ մասում բնական գազով աշխատող ջեռուցման համակարգեր տեղադրված չեն: Ամեն տարի, աշնանը Տավուշի մարզի սահմանամերձ, անտառամերձ բնակավայրերի ամեն ընտանիքի տրվում էր 8 խորանարդ մետր վառելափայտի թափուկ անտառում անվճար պատրաստելու, տնօրինելու թույլտվություն: Սակայն այս տարի նման թույլտվություն տրվել է միայն ընտանեկան եւ սոցիալական նպաստ ստացող ընտանիքներին: Նպաստառու ընտանիքներին այդ թույլտվությունը տրվեց ուշ, շատ ընտանիքներ չհասցրին անտառում վառելափայտի թափուկ պատրաստել եւ տեղափոխել: Չնայած վառելափայտի թափուկ պատրաստելու ժամկետ է սահմանված մինչեւ նոյեմբերի 25-ը, սակայն անտառային թաց ճանապարհներն այլեւս չեն չորանա, հնարավոր չի լինի փայտ պատրաստել եւ տեղափոխել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ԿԱՍՊԵՐՍԿԻ»

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ SilentCryptoMiner-Ի ԳՐՈՀՆԵՐ

«Կասպերսկի» ընկերության փորձագետները հայտնաբերել են SilentCryptoMiner մայների տարածման անսովոր արշավ: Վարակման բարդ շղթայի հետ բախվել են օգտատերեր աշխարհի մի քանի երկրներում, այդ թվում՝ Բելառուսում, Հնդկաստանում, Ուզբեկստանում եւ Ղազախստանում: Կիբեռզրոհների ամենամեծ բաժինը գրանցվել է Ռուսաստանում: Այս արշավի տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ չարագործներն օգտագործել են մի քանի անսովոր տեխնիկա՝ օգտատերերի համակարգերում հայտնաբերումը շրջանցելու ու այնտեղ ամրագնդվելու, այդ թվում՝ SIEM համակարգի բաց կոդով Wazuh ագենտը տեղադրելու համար: Մասնագետները նշում են, որ վնասաբեր արշավն այսօր շարունակում է արդիական մնալ:

Ընկերության փորձագետները պարզաբանում են, որ SilentCryptoMiner-ը բաց սկզբնական կոդով թաքնված մայներ է, որն օգտագործում է վարակված սարքի հզորությունը կրիպտոարժույթի թաքնված մայնինգի համար: Հայտնաբերված սխեմայում խոսքը Monero եւ Zephyr կրիպտոարժույթների մասին է: Գրոհողները տարածել են SilentCryptoMiner-ը կեղծ կայքերի միջոցով, որտեղ, իբր, կարելի էր անվճար ներբեռնել, օրինակ, uTorrent, MS Excel, MS Word, Minecraft, Discord: Չարագործները նաեւ մի քանի Telegram ալիքներ են վարել կրիպտոարժույթ ունեցողների եւ չիթերի օգտատերերի համար: Դրանք առաջարկել են բեռնել թեմատիկ ծԱ, որի քողի տակ մարդու սարքում հայտնվում էր թաքնված մայներ: Բացի այդ, վնասաբեր ծրագիրը տարածվել է YouTube-ի միջոցով՝ հավանաբար կոտրած տարբեր հաշիվներից հրապարակված բազմաթիվ անգլիալեզու հոլովակների հետ միասին: Տեսահոլովակների նկարագրության մեջ եւ մեկնաբանություններում տեղադրվել են կեղծ ռեսուրսների հղումներ:

Իրեն անհրաժեշտ հավելվածը տեղադրելու համար օգտատերը պետք է ներբեռներ ZIP արխիվ, որտեղ, իբր, անհրաժեշտ ծԱ-ն էր: Ներսում MSI ֆայլ էր (Windows-ում ծրագրեր տեղադրելու համար) եւ TXT փաստաթուղթ՝ ծրագրի տեղադրման համար գաղտնաբառով եւ հրահանգով: Նախքան ծրագրի գործարկումը խորհուրդ էր տրվում անջատել հակավիրուսային լուծումը: Ընդ որում՝ մարդը չէր ստանում իր փնտրած ծրագիրը: Դրա փոխարեն սարքում տեղադրվում էր վնասաբեր ծԱ:

Վարակման բազմաստիճան շղթայի արդյունքում օգտատիրոջ սարք ներթափանցում էր վնասաբեր սկրիպտ՝ SilentCryptoMiner-ի հետ միասին: Հայտնաբերված արշավի տարբերակիչ առանձնահատկությունն էր չարագործների կողմից SIEM-ի (իրադարձությունների մոնիտորինգի համակարգ) Wazuh ագենտի կիրառումը: Նման տեխնիկան ուղղված էր պաշտպանական լուծումներով հայտնաբերումը շրջանցելուն եւ օգտատերերի սարքերում ամրապնդվելուն: Բացի այդ, SIEM համակարգը չարագործներին հնարավորություն էր տալիս ստանալ հեռավար հասանելիություն վարակված սարքին, տվյալներ հավաքել եւ ուղարկել իրենց հրամանների սերվեր:

Օգտագործելով վնասաբեր ծրագիրը, որը գրոհողներին թույլ էր տալիս զոհի սարքում տեղադրել մայներ՝ չարագործները կարող էին նաեւ տեղեկություններ հավաքել համակարգչի եւ օգտատիրոջ անվան, ՕՀ-ի տարբերակի եւ ճարտարապետության, պրոցեսորի անվանման, գրաֆիկական պրոցեսորի եւ տեղադրված հակավիրուսային ծԱ-ի տվյալների մասին: Այս տվյալներն ուղարկվել են գրոհողների Telegram բոտ: Այդ վնասաբեր ծԱ-ի որոշ մոդիֆիկացիաներ կարողանում էին ուղարկել աշխատասեղանի արտապատկերը, մյուսները՝ բրաուզերում տեղադրել ընդլայնում, որը թույլ է տալիս կեղծով փոխարինել կրիպտոդրամապանակները:

«Կասպերսկի» հայաստանյան գրասենյակ

ԳՆԱՅԻՆ

100 ԴՐԱՄԱՆՈՑ ՄԵՏԱՂԱԴՐԱՄԸ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆ

Մայրաքաղաքի տրանսպորտային համակարգի բերեփոխումների եւ միասնական տոմսային համակարգի ներդրման համատեքստում նոյեմբերի 1-ից հասարակական տրանսպորտից, մասնավորապես՝ MAN, ZhongTong եւ GazelCity մակնիշի փոխադրամիջոցներից օգտվելիս պարտադիր պայման է լինելու 100 դրամանոց մետաղադրամի առկայությունը կամ ավտոբուսներում տեղադրված վճարային համակարգով QR կոդի միջոցով վճարում իրականացնելը:

Այս մասին հայտնել է Երեւանի քաղաքապետի խոսնակ Հայկ Կոստանյանը:

«Նպատակը նախեւառաջ հնարավոր ստվերային շրջանառությունը կանխելն է, այդպիսով՝ վարորդներին իրենց հիմնական գործից չշեղելը, ինչպես նաեւ հունվարի 1-ից սպասվող միասնական տոմսային համակարգին անցում կատարելուն նախապատրաստվելը:

Ըստ այդմ՝ վարորդները ուղեւորներից առձեռն գումար չեն վերցնելու եւ մանրը չեն վերադարձնելու: Ուզում եմ տեղեկացնել նաեւ, որ վերջին 4 ամիսների ընթացքում «Երեւանի ավտոբուս» ՓԲԸ հասույթը կազմել է երկու միլիարդ ութ հարյուր տասնյոթ միլիոն ՀՀ դրամ, ինչը դրան նախորդող 4 ամիսների համեմատ ավելացել է 3,9%: Միայն այս տարվա սեպտեմբեր ամսվա աշխատանքային օրերին հավաքագրվող հասույթը օրական կազմել է 30-32 միլիոն ՀՀ դրամ»,- գրել է նա:

ՆՈՐ ԹԱՆԿԱՑՈՒՄՆԵՐ՝ «ԱՐՏ ԼԱՆՉ»-ՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն «Արտ Լանչ»-ից օգտվող քաղաքացիներն ահազանգում են, որ սննդի ցանցում նոր թանկացումներ են:

Այս անգամ սննդից բացի թանկացել են սննդի համար նախատեսված տարաները, որոնք նախկինում անվճար էին: Տարաների արժեքը դարձել է 70 դրամ: Հաճախորդների խոսքով՝ թանկացել են անգամ տոպրակները, հիմա դրանց արժեքը տատանվում է 30-ից 50 դրամի սահմաններում:

Փաստ է, որ «Արտ Լանչ» սննդի ցանցը Հայաստանում մեծ ճանաչում ունի եւ մեծ թվով հաճախորդներ: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ իր հաճախորդների մեծ թիվը հաշվի առնելով՝ սննդի կենտրոնի սեփականատերը փորձում է ավել գումար աշխատել:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց «Արտ Լանչ»-ի սեփականատեր Բակուր Մելքոնյանի հետ՝ հասկանալու, թե ինչով են պայմանավորված նման թանկացումները: Վերջինս ArmLur.am-ի հետ զրույցում ասաց. «Եվրոպայից տեսնելով եմ դա առաջարկել: Ամբողջ աշխարհը գնում է դրան, քանի որ շատ անիմաստ թափոն էինք ունենում»:

Նրա խոսքով՝ քաղաքացիները պլաստմասե ամանները 1 հատի փոխարեն մի քանի հատ էին վերցնում, ինչը հավելյալ թափոն էր դառնում:

Բակուր Մելքոնյանն ասում է, որ տարաների վրա ինքնարժեքն է դրված, սա կօգնի քաղաքացիներին խելամիտ օգտագործել դրանք:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 17 պատահար. 21 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

«Ակբա» բանկի գործընկերությամբ անցկացվել է արհեստական բանականությանը վերաբերող հայկական ամենամեծ համաժողովը՝ AI Conf-ը, որի շրջանակում ոլորտի ներկայացուցիչները քննարկել են արհեստական բանականության ներդնումը ֆինանսաբանկային ոլորտում, բիզնեսում եւ կրթության մեջ:

Krisp ընկերության կողմից կազմակերպած համաժողովի խոսնակներից էր «Ակբա» բանկի արհեստական բանականության եւ մեքենայական ուսուցման մասնագետ Միեր Մովսիսյանը, ով ներկայացրեց մեքենայական ուսուցմամբ եւ արհեստական ինտելեկտի կիրառմամբ տարբեր խնդիրների լուծումը բանկում:

«Փաստաթղթաշրջանառության ավտոմատացման նախագծի ներդրմամբ, այժմ տասնյակ հազարավոր փաստաթղթեր մշակվում են ավտոմատ կերպով: Մենք շատ գործընթացներ ենք ավտոմատացրել, որոնց օգնությամբ այժմ ավելի կարճ ժամանակահատվածում ենք իրականացնում շատ պրոցեսներ, օրինակ՝ մարդու վարկունակության գնահատումը»,- նշել է «Ակբա» բանկի արհեստական բանականության եւ մեքենայական ուսուցման մասնագետ Միեր Մովսիսյանը:

«Մենք չենք կարող չլինել նման միջոցառման կողքին, որը ըստ էության միավորում է Հայաստանի AI համայնքը, մարդկանց, ովքեր այս կամ այն ձեւաչափով առնչվում են արհեստական բանականության գործիքների կիրառմանն ու զարգացմանը: Մենք կարեւորում ենք այդ համայնքի համախմբումն ինչպես մտքերի փոխանակման, այնպես էլ իրազեկվածության բարձրացման տեսանկյունից: Դա կարող է ոգեշնչել շատ երիտասարդների զբաղվել տվյալագիտությամբ, քանի որ շատ սակավաթիվ AI մասնագետներ ունենք ու թերեւս դա ոլորտի ամենամեծ մարտահրավերներից է»,- նշել է «Ակբա» բանկի պլատֆորմների եւ տեխնոլոգիաների զարգացման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Տիգրան Սիմոնյանը:

Շուտով «Ակբա» բանկի հաճախորդներին հասանելի կլինի նաեւ արհեստական բանականությամբ ինտեգրված ձայնային օգնականը՝ հաճախորդներին ավելի արագ արձագանքելու համար:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՆՉԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ակբա Լիզինգի գլխավոր հովանավորությամբ երկրորդ տարին անընդմեջ կայացավ Francofest 2024-ը՝ ֆրանսերեն գրքերի փառատոնը՝ խրախուսելով ֆրանսիական գրքերի, գրականության եւ մշակույթի տարածումը Հայաստանում: Մշակութային այս աննախադեպ միջոցառումը կազմակերպել է Newmag ընկերությունը:

Newmag-ը ֆրանսիական գրքերի այս փառատոնին հայերենով է ներկայացրել է 5 նոր գիրք:

Ի դեպ, Francofes-ը վերջին 15 տարվա ամենանշանակալի գրական միջազգային իրադարձությունն է բերում Հայաստան: Ֆրանկոֆոն աշխարհի ամենահեղինակավոր Goncourt մրցանակը Հայաստանում հիմնում է իր մասնաճյուղը:

«Ակբա» Լիզինգի 100% բաժնետերն «Ակբա» բանկն է:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» 4

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

2024թ.-ի հոկտեմբերի 30-ին ժամը 11:00-ին կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով:

Թիվ 56 լոտ՝ ոսկյա զարդեր 43,5 գր. ընդհանուր քաշով, որից 37,4 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ (զուտ քաշը 37 գր.) 585 հարգի՝ 714,800 ՀՀ դրամ, 6,1 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ 500 հարգի՝ 99,300 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 814,100 ՀՀ դրամ: Թիվ 57 լոտ՝ոսկյա զարդ 34,2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 34 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 656,800 ՀՀ դրամ: Թիվ 58 լոտ՝ ոսկյա ջարդոն 33,3 գր. ընդհանուր քաշով, որից 29,3 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 28 գր.) 585 հարգի՝ 540,900 ՀՀ դրամ, 4 գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 3,8 գր.) 500 հարգի՝ 61,900 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 602,800 ՀՀ դրամ: Թիվ 59 լոտ՝ոսկյա ջարդոն 16,4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 14,1գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 272,400 ՀՀ դրամ: Թիվ 60 լոտ՝ ոսկյա զարդ 22,8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 22,5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 434,600 ՀՀ դրամ: Թիվ 61 լոտ՝ ոսկյա զարդ 21 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 20,8 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 401,800 ՀՀ դրամ: Թիվ 62 լոտ՝ ոսկյա ջարդոն 9,4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 8,4 գր.) 500 հարգի, լոտի մեկնարկային գինը 136,800 ՀՀ դրամ: Թիվ 63 լոտ՝ ոսկյա զարդ 3,6 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 3,3 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 63,700 ՀՀ դրամ: Թիվ 64 լոտ՝ ոսկյա զարդեր 9,2 գր. ընդհանուր քաշով, որից 5,5 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ 500 հարգի՝ 89,500 ՀՀ դրամ, 3,7 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ 585 հարգի՝ 71,400 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 160,900 ՀՀ դրամ: Թիվ 65 լոտ՝ ոսկյա զարդեր 9,1 գր. ընդհանուր քաշով, որից 4,1 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ 750 հարգի՝ 101,300 ՀՀ դրամ, 5 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդ 585 հարգի՝ 96,500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 197,800 ՀՀ դրամ: Թիվ 66 լոտ՝ ոսկյա զարդ 7,5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 7,2 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 139,000 ՀՀ դրամ: Թիվ 67 լոտ՝ ոսկյա զարդ 5.4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 5.3 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 102,300 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով՝ վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

հեռ. +374 43 00 42 27

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՅՈՒՆԻԲԱՆԿ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Freedom Broker Armenia-ն հայտարարում է նոր, համապարփակ վերլուծական էջի մեկնարկի մասին, որը նախատեսված է ներդրողներին տրամադրելու խոր գիտելիքներ եւ գործիքներ՝ համաշխարհային ֆինանսական շուկաներում ներդրումներ կատարելիս կողմնորոշվելու համար: Էջում ներկայացված են մի շարք վերլուծական ձեւաչափեր, ֆինանսական ամփոփագրեր եւ հաշվետվություններ, որոնք օգտակար են ինչպես փորձառու, այնպես էլ շուկայում նորեկ ներդրողների համար:

Ավելի քան մեկ տասնամյակ Freedom Broker-ը շաբաթը երկու անգամ հրապարակում է ներդրումային ակնարկներ: Այս վերլուծությունները խնամքով կազմված են ընկերության փորձագետ վերլուծաբանների կողմից, ովքեր վերահսկում եւ վերլուծում են աշխարհի ֆոնդային բորսաներում տեղի ունեցող զարգացումները: Նրանք ուսումնասիրում են շուկայի միտումները՝պարզելով, թե որ ընկերություններն են ընկել ներդրողների վարկանիշում եւ որոնք են դարձել նոր ֆավորիտները: Վերլուծությունների էջը միավորում է այս բոլոր արժեքավոր պատկերացումները մեկ հասանելի հարթակում՝ հաճախորդներին տրամադրելով մանրամասն պատկերացում հիմնական միտումների, կանխատեսումների եւ հեռանկարային ներդրումային գաղափարների վերաբերյալ:

«Մեր նոր վերլուծական էջի գործարկումով մենք ավելի հեշտացնում ենք մեր հաճախորդներին կարեւոր տեղեկատվություն տրամադրելը, որը նրանց անհրաժեշտ է տեղեկացված ներդրումային որոշումներ կայացնելու համար: Մեր նպատակն է ներդրողներին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ՝ անկախ նրանից՝նրանք հետեւում են շուկայի հիմնական միտումներին, թե հնարավորություններ են փնտրում զարգացող տնտեսություններում», - նշում է Freedom Broker Armenia-ի ներկայացուցիչը:

Fastex–Ը՝ Future Economy Summit–Ի ՀՈՎԱՆԱՎՈՐ

Fastex-ը հովանավորում է Future Economy Summit-ը: Համաժողովի շրջանակում Fastex-ի ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել Երեւանի պետական, Հայաստանում Եվրոպական, Հայաստանում Ֆրանսիական, Սլավոնական եւ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանների ուսանողների հետ: Տեղեկատվական հանդիպումների ընթացքում հայտարարվել է «Ֆինտեխ լուծումներն ապագայի տնտեսությունում» թեմայով հետազոտական աշխատանքների մրցույթ: Մասնակցության հայտադիմումների ընդունման վերջնաժամկետը հոկտեմբերի 16-ն է: Ուսանողները կարող են իրենց աշխատանքներն ուղարկել՝ անցնելով հետեւյալ հղմամբ: Հավելենք, որ մրցույթի ավարտին լավագույն աշխատանքների հեղինակները կպարգեւատրվեն FTN-ներով: Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը կստանա 300 FTN, երկրորդ եւ երրորդ հորիզոնականներն զբաղեցրածները՝ համապատասխանաբար 200 եւ 100 FTN:

The Future Economy Summit-ի հիմնական միջոցառումը կկայանա հոկտեմբերի 21-ին Congress հյուրանոցում:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exchange կրիպտո փոխանակման հարթակը, Fastex Card-ը, Fastex Wallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիզիթալ սփեյսներով, ինչպես նաեւ YoHealth՝ առողջ ապրելակերպը խթանող հավելվածը: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը համաշխարհային թվային ֆինանսների զարգացող աշխարհում՝ մշտապես հետեւելով ոլորտի միտումներին:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԽԵՂԱԹՅՈՒՐՎՈՒՄ Է

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՔԱՐՈԶՉԱՄԵՔԵՆԱՅԻ ԿԵՂԾ ԹԵԶԵՐԸ

Պատմության կեղծարար Ռիզվան Հուսեյնովը վերջերս այցելել է օկուպացված Արցախ եւ տեսանյութերի շարք նկարահանել Գանձասարի, Դադիվանքի եւ Ամարասի վանական համալիրներում, նշել է Monument Watch-ը:





«Հուսեյնովի կողմից հնչեցվել է ադրբեջանական քարոզչական հիմնական թեզը, ըստ որի՝ հայերը իբր աղճատել են այդ վանքերի պատմական տեսքը, հայացրել դրանք, վերափոխել: Այս թեզը, իհարկե, նոր չէ եւ հնչեցվում է վերջին չորս տարիներին եւ անընդհատ կրկնվում է ադրբեջանական գրեթե բոլոր լրատվամիջոցերում: 2024 թվականի սեպտեմբերին Հուսեյնովը որպես թիրախ էր ընտրել Արցախի առավել հայտնի երեք վանքերը՝ ցուցադրելով «հայերի պատճառած վնասները»: Փաստորեն, մենք տեսնում ենք քարոզչական բնույթ ունեցող թեզի տեղայնացումը, տեղադրումը բուն հուշարձանի վրա, որտեղ ամեն մի դետալ դիտարկվում է հենց այս թեզի շրջանակում: Պատահական չէ Արցախի երեք առավել հայտնի ու հռչակավոր վանքերի ընտրությունը: Ադրբեջանական կողմի թիրախում այս վանքերը եւ հատկապես Գանձասարը եւ Ամարասը հայտնվեցին 2023 թվականի սեպտեմբերյան պատերազմից հետո, երբ Արցախն ամբողջությամբ օկուպացվեց եւ վերոհիշյալ Ռիզվան Հուսեյնովը հատուկ անդրադարձ կատարեց դրանց:

Գանձասարի եւ Ամարասի վանական համալիրների տարածքը փակ է այցելությունների համար, մուտքերը կնքված են ու կողպած: Ակնառու է, որ ադրբեջանական կողմը հատուկ տեղ է տալիս այս վանքերին իրենց քարոզչության մեջ, բայց թույլ չի տալիս իր քաղաքացիներին այցելել դրանք:

Այժմ անդրադառնանք Հուսեյնովի կողմից Գանձասարի եւ Դադիվանքի տարածքում հնչեցված առանձին մտքերին: Գանձասարի վանքում Հույսենովը նշում է, որ եկեղեցու պատերին արտաքուստ գտնվող արձանագրություններն իբր ավելացվել են հայերի կողմից եւ այդ կեղծարարությունը կատարվել է վերջին հարյուր տարում: Նշենք, որ Սբ. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու եւ գավթի արտաքին ճակատներին կան նվիրատվական բնույթի տասնյակ արձանագրություններ, որոնք հսկայական ինֆորմացիա են պարունակում միջնադարյան Արցախի քաղաքական, հոգեւոր, տնտեսական իրողությունների մասին եւ դրանց կեղծ անվանելն ուղղակի ոտնձգություն է երկրամասի իրական պատմությանը: Խոսելով եկեղեցու արտաքին պատերի մասին՝ նշվում է, որ պատի շարվածքում եղած կարմիրին հարող երեսպատման քարերը նոր են եւ բերվել են Հայաստանից եւ մասնավորապես՝ Էջմիածնից ու վկայում են եկեղեցու հայկականացման փորձերի մասին: Ըստ Հուսեյնովի՝ միակ անվնաս արձանագրությունը եկեղեցու ներսում գտնվող շինարարական արձանագրությունն է, որի վերծանության ֆանտաստիկ տարբերակը տալիս է Հուսեյնովը: Ըստ այդմ տեսնում ենք, որ վանքը կառուցել է Խաչենի թյուրք կառավարիչ Հասան-Ջալալը, որն «ընդունել էր հայկական միաբնակություն»: Խոսվում է Հասան-Ջալալի կանանց մասին եւ որ իբր արձանագրության մեջ հիշատակվում է աղվանից ժողովուրդը, աղվանից եկեղեցու առաջնորդը եւ ոմն Կոչու բեյ: Քարոզչական բնույթ կրող այս կեղծիքները աչքի են ընկնում իրենց մեծագույն հիմարությամբ: Գանձասարի վանքը Արցախի առավել հետազոտված հուշարձաններից է, կան վանքի բազմաթիվ լուսանկարներ, այդ թվում եւ 19-րդ դարում արված, որտեղ երեւում են եկեղեցու անվնաս պատերը, արձանագրությունները: Լավ կլիներ, որ Հուսեյնովը այս ամենին ծանոթանար: Գանձասարի վանքի արձանագրությունները հրատարակվել են բազմիցս, այդ թվում եւ խորհրդային տարիներին, երբ տարածքում առանց խորհրդային Ադրբեջանի պաշտոնական թույլտվության հետազոտական աշխատանքներ չէին կարող իրականացվել: Վանքի մասին առկա է մեծածավալ օտարալեզու գրականություն, վանքին բազմիցս անդրադարձել են օտար հեղինակները: Եկեղեցու կառուցման արձանագրությունը եւս անեղծ իր տեղում է, բազմիցս հրատարակված, եւ փոփոխելով այն ներկայացնելը ուղղակի հիմարություն է...

Հաջորդ հուշարձանը, որտեղ իր մտքերով «փայլատակում» է Հուսեյնովը՝ Դադիվանքն է: Մասնավորապես՝ կեղծարարարի թիրախում է հայտնվել է Դադիվանքի Կաթողիկե եկեղեցին, որ կառուցել է տվել 1214 թվականին Հաթերքի Վախթանգ իշխանի կին Արզուխաթունը: Հուսեյնովը կեղծ է համարում եկեղեցու հարավային ճակատին փորագրված ընդարձակ շինարարական արձանագրությունը, կտիտորական բարձրաքանդակները եւ բազմագույն շարվածքը, որն ըստ կեղծարարի՝ արվել է վերջին տասնամյակում Էջմիածնից բերված քարերով: Ակնառու է, որ Հուսեյնովը չի տիրապետում երկրամասի ճարտարապետական դպրոցին, քանի որ կոպտատաշ քարերով ու առանց երեսպատման կառուցված գավիթը կարծում է, որ միտումնավոր չի վերականգնվել, ուստի դրա համար այդպիսի տեսք ունի»:

Monument Watch

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«ԲԱԼԵՏ ՓԱՐԱՋԱՆՈՎ». ԽՈՐԵՈԳՐԱՖԻԿ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ ու Ժողովրդական երաժշտության եւ պարի ազգային կենտրոնի նախաձեռնությամբ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի է ունեցել «Բալետ Փարաջանով» ժամանակակից խորեոգրաֆիկ-բալետային ներկայացման առաջնախաղը:

Ներկայացմանը հետեւել են ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Դանիել Դանիելյանը եւ Ալֆրեդ Քոչարյանը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը ողջունել է ներկաներին եւ շնորհավորել կարեւոր իրադարձության առիթով՝ շնորհակալություն հայտնելով ֆրանսիացի գործընկերներին գեղեցիկ համագործակցությամբ Փարաջանովի հոբելյանն արժեւորելու համար:

«Փարաջանովը սահմաններ ու արգելքներ չէր ճանաչում. նա սիրում էր համախմբել, միավորել թե՛ մարդկանց, թե՛ մշակույթներն ու արվեստի տարբեր ճյուղերը: Եվ այսօր մենք էլ, փարաջանովյան ոգով ներշնչված, միավորել ենք տարբեր մշակույթներ՝ հասկանալու, թե նոր սերունդն ինչպես է յուրացնում նրա ժառանգությունը»,- ասել է Դանիել Դանիելյանը:

Բալետային ներկայացումն իրականացվում է Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների եւ հայ-ֆրանսիական միջմշակութային երկխոսության շրջանակում:

Հայաստանի «Բարեկամություն» պետական անսամբլի հետ առաջին անգամ Հայաստանում հանդես է եկել Ֆրանսիայի «Բալետ Պրելժոկաժ»-ի երիտասարդական բալետային խումբը:

7-ԱՄՅԱ ՀԱՅ ԴԱՇՆԱԿԱՀԱՐՈՒՀԻՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ Է ԴԱՐՁԵԼ

Իտալիայի Բարի գավառի Ակվավիվա դելե Ֆոնտի քաղաքում կայացել է երիտասարդ երաժիշտների Colafemmina Piano 8-րդ միջազգային մրցույթը:

Առաջին անգամ մրցույթն այս տարի ունեցել է նաեւ մասնակից Հայաստանից՝ Երեւանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի 2-րդ դասարանի սան Անի Մելիքյանը:

7-ամյա հայուհին արժանացել է երիտասարդ դաշնակահարների անվանակարգի առաջին բացարձակ մրցանակի: Հաղթանակի առթիվ Անիին շնորհավորել է Բարիում Հայաստանի Հանրապետության պատվո հյուպատոսությունը:

ՄԱՐԶԱԿԱՆ

9 ՄԵԴԱԼ՝ ՍԱՄԲՈՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Կիպրոսի Լառնակա քաղաքում կայացած սամբոյի դեռահասների, պատանիների եւ երիտասարդների աշխարհի առաջնությանը Հայաստանի սամբոյի հավաքականը նվաճել է 9 մեդալ՝ 2 արծաթե եւ 7 բրոնզե: Այս մասին հայտնում է Հայաստանի սամբոյի ֆեդերացիան:

Փոխչեմպիոն է դարձել 58 կգ քաշային Տիգրան Գրիգորյանը եւ 88 կգ քաշային Սեյրան Սարուխանյանը: Բրոնզե մեդալներ են նվաճել 46 կգ քաշային Սեւակ Դավոյանը, 64 կգ քաշային Միքայել Թումասյանը, 71կգ Ռադիկ Ղուկասյանը, 71 կգ քաշային Միեր Օհանյանը, 79 կգ քաշային Սամվել Ղազարյանը, ինչպես նաեւ աղջիկների պայքարում՝ 47 կգ քաշային Միլենա Առաքելյանը եւ 59 կգ Սյուզաննա Մանուկյանը:

48-ՐԴՆ Է WTA ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ

Պրոֆեսիոնալ թենիսիստ Էլինա Ավանեսյանը 48-րդն է WTA վարկանիշային աղյուսակում:

Դասակարգման նոր աղյուսակում Էլինա Ավանեսյանը նահանջել է մեկ հորիզոնականով՝ նա այժմ 48-րդն է աշխարհում:

Էլինա Ավանեսյանը ծնվել է Ռուսաստանի Պյատիգորսկ քաղաքում 2002 թվականին:

Ավանեսյանը Հայաստանի դրոշի ներքո հանդես է գալիս 2024 թվականի օգոստոսից:

ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՊԱՀԱՆՋԻ ՄԱՍԻՆ

ՖԱՖ-ը, ի պատասխան բազմաթիվ ԶԼՄ-ների հարցազրույցներ տալու առաջարկին՝ հանդես է եկել հայտարարությամբ. «Ի պատասխան բազմաթիվ ԶԼՄ-ների հարցազրույցներ տալու առաջարկին՝ տեղեկացնում ենք, որ երեկ ֆուտբոլի ֆեդերացիայի մոտ հնչած ՀՖՖ նախագահի հրաժարականի պահանջի մասին ցանկացած տեղեկատվություն, ինչպես նաեւ մեր հետագա քայլերը կհրապարակվեն «Առաջին հայկական Ճակատ»-ի սոցիալական ցանցերի էջերում՝ հայտարարությունների տեսքով: Կարեւոր ենք համարում նշել, որ հարցը վերաբերում է ֆուտբոլային ողջ հանրությանը: Շնորհակալություն ենք հայտնում բոլոր ֆուտբոլային կառույցներին աջակցության եւ հարցի վերաբերյալ մտահոգության համար»:

ՀԱՂԹԱՆԱԿ՝ ԹՈՒՐՔ ՄՐՑԱԿՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հայ բռնցքամարտիկները հերթական հաղթանակներն են տարել մինչեւ 22 տարեկանների Եվրոպայի առաջնությունում:

Հայաստանի Բռնցքամարտի Ֆեդերացիան հայտնում է, որ մրցումային 3-րդ օրը 71 կգ քաշային Նարեկ Զախարյանը պարտության է մատնել սլովակ Լադիսլավ Հորվարտին: 54 կգ քաշային Դավիթ Եգորյանը տպավորիչ հաղթանակ է տոնել թուրք Չան Կայայի նկատմամբ:

● Հոկտեմբերի 17-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Սասունցի David Copperfield» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3.000-8.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որոնք են խնամքի տրամադրման տեսակները: Ո՞վ իրավունք ունի օգտվելու խնամքի ծառայություններից:

Ստելլա Մանուչարյան (46 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ս. Մանուչարյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ խնամքը տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր կամ հատուկ տիպի (մասնագիտացված) հաստատություններում եւ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում տրամադրվում է ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած կամ 18 տարին լրացած միայնակ (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ քաղաքացին (կամ նրա օրինական ներկայացուցիչը) պետք է դիմի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժին, որտեղ քաղաքացուն տրամադրվում է «Խնամքի տրամադրման համար դիմած անձի բժշկական քարտ» ձեւաթուղթը, որը լրացվում է քաղաքացուն սպասարկող տարածքային պոլիկլինիկայի կողմից: Տարածքային մարմնի ղեկավարը որոշում է կայացնում խնամք տրամադրելու մասին եւ այն ներկայացնում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Նախարարությունը տարածքային մարմնից ստացած որոշումների հիման վրա համակարգում է տուն-ինտերնատներ հաճախորդների ընդունելության գործընթացը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե բանկը հաճախորդի հաշվեհամարին գումարը երկու անգամ է փոխանցում, ապա պարտավո՞ր է արդյոք հաճախորդը վերադարձնել այդ գումարը:

Անի Կիրակոսյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, հաճախորդը պարտավոր է այդ գումարը հետ վերադարձնել, քանի որ անձը, ով առանց օրենքի, այլ իրավական ակտերի կամ գործարքի սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը)՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված դեպքերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի 1-ին կետ):

Այս կանոնը կիրառվում է՝ անկախ այն բանից՝ անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետեւանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բանկն իրավունք ունի նաեւ առանց հաճախորդի կարգադրության հաշվից գումար դուրս գրել դատարանի վճռով սահմանված դեպքերում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Երեւանի պատվավոր քաղաքացու կոչում շնորհվեց ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, բանաստեղծ գրականագետ Հենրիկ Էդոյանին:

Նրան Երեւանի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու հարցը քննարկման ներկայացվեց եւ ընդունվեց ավագանու հոկտեմբերի 15-ի նիստում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 3 + 7 +14 + 18
Կոտայքի լեռներ	+3 + 6 +13 + 15
Կոտայքի նախալեռներ	+9 + 11 +17 + 19
Գեղարքունիք	+3 + 8 +11 + 15
Լոռի	+ 3 + 7 +12 + 16
Տավուշ	+ 7 + 13 +15 + 19
Արագածոտնի լեռներ	+ 1 + 5 +12 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 +17 + 20

Արարատ	+ 9 + 11 +19 + 22
Արմավիր	+ 7 + 10 +19 + 22
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +12 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 +19 + 21
Սյունիքի հովիտներ	+ 7 + 12 +18 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 5 +15 + 18
ԼՂՀ	+ 2 + 6 +15 + 18
Երեւան	+15 + 18 + 22 + 24

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*